

երեսփոխան ինքեանց, եւ առաքեցին դեսպանութեան օրինօք հրաւիրակ եւ յորդորիչ Տեառն Եղիազարու սուրբ յերուսաղէմայ աթոռակալի, բազում եւ պէսպէս աղաչանաց եւ թախանձանաց բանիւ եւ գրով, որպէսզի յօժարական հաւանութեամբ զիջցի ըստ նոցա, ի ցաւակցութիւն աղճատանաց սուրբ աթոռոյն էջմիածնայ եւ բոլոր տանս Հայոց, եւ խոնարհեալ դիմեսցէ ի տեղի ուրեք ի Թէոդուպօլիսն կամ ի Թօխաթ եւ կամ ուրանօր ինքն կամիցի, եւ զամենեսեան զնոսա առ ինքն կոչելով՝ նստցի դատաւոր ի միջի նոցա, եւ արասցէ դատ իրաւամբ եւ արդարութեամբ ըստ կանոնաց հարցն սրբոց եւ նախնեաց մերոց, ի մէջ մեր ամենեցուն եւ ի մէջ կաթողիկոսի նարզեան ժամուս՝ Տեառն Յակոբայ, որ նստի յաթոռ սուրբ էջմիածին:»

Մենք հոս պահ մը կանք առնենք: Կարիք չկայ պատճառարանելու որ նման ժողով մը ո՛չ իրաւական եւ ո՛չ ալ գործնական գետնի վրայ կարելի էր կազմել: Եղիազար իբր հակաթոռ եւ հոչակեալ թշնամի Յակոբի բնական է դատախազ եւ դատաւոր ըլլալու օրինական որեւէ իրաւասութիւն չէր կրնար ունենալ: Ո՛չ ալ կարիք կայ ստուգելու թէ յիշուած բոլոր վարդապետներն ալ իրապէս գոյութիւն ունէին թէ ոչ: Պիտի բաւականանամ միայն ցոյց տալով որ 1664ին Երեւան այդպիսի ժողով չէ գումարած ո՛չ Հոկտեմբերին եւ ո՛չ ալ տարւոյն մէջ ոեւէ ատեն: Զաքարիա Ագուլեցի 1664ին կը գրէ:

«Հոկտեմբերի ԺԸ (18) ումն ես Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս ելայ, գնացի Երեւան, թէ իմ եկապար Սիմոնի խիզանն բերեմ Ագուլիս, խօ Աբասղուլի խանն դաստուր (իրաւունք) չտվեց:»

«Ես Զաքարիայ իմ եկապար Սիմոն վեր կալայ Դէքտեմբերի Զ (6) ումն եկի Ագուլիս:»⁽⁸⁾

Այսպէս երկու ամսուան մօտ Հոկտեմբերի 18էն սկսելով Զաքարիա Ագուլեցին Երեւան կը մնայ եւ նման ժո-

ղովի մը մասին ո՛չ մէկ տեղեկութիւն ունի: Զաքարիա Սարկաւազ ալ իր պատմութեան մէջ նման ժողով մը չի յիշեր: Սակայն արդար ըլլալու համար յիշենք որ Զաքարիա Սարկաւազ կը վերկայէ թէ «չըջէր Ոնոփրիոս ի վանորայս, եւ արծարծէր գչարութիւն իւր, եւ յիշէր զչարիսն իւր, որպէս հուր թաքուցեալ ի ներքոյ յարդի, եւ կամ իժ ծրարեալ ի վարչամակի, այսպէս եւ սա զծածուկ չարիսն իւր յիշէր առ այնոսիկ, որք իբրեւ զինքն էին անուղիղ եւ յանդիմանեալ ի Կաթողիկոսէն, այժմ միարանցոյց ընդ ինքեան, եւ գրեցին բազում հայհոյանք սուտս ի Կաթողիկոսէն առ Եղիազար վարդապետ, որ Պատրիարք էր Երուսաղէմի, թէ դու եկ ի սուրբ Աթոռ, եւ մեք քեզ տամք զԿաթողիկոսութիւնն էջմիածնի՝ արքունական նօմոսիւք: Եւ ասա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի սուրբ Աթոռս: Զայս գրեցին, եւ ընդ հաւատարմաց իւրեանց առաքեցին յառաջագոյն, եւ յետոյ գնաց Օնոփրիոս զկնի թղթոյն:»⁽⁹⁾ Պէտք է խորհիլ որ Ոնոփրիոսի նամակը եւ Զաքարիա Սարկաւազին վկայութիւնը նոյն բանին է որ կ'ակնարկեն, իրենց աւելցնուած մանրամասնութիւններով: Անշուշտ դժուար է հաւատալ որ ամբաստանագիրը օր ցերեկով Երեւանի մէջ կատարուած ժողովի հետեւանքը ըլլար: Հաւանական է որ Ոնոփրիոս իր չըջագայութեան ընթացքին իր համախոհներուն վաւերացնել տուաւ խնդրոյ առարկայ ամբաստանագիրը: Զաքարիա Սարկաւազ խիստ տողերով կը խօսի Ոնոփրիոսի մասին:

Ոնոփրիոսի (եւ իր համախոհներուն) ամբաստանութիւնները Յակոբ Դ.ի զէմ այսպէս կը սկսին այն նամակին մէջ որուն սկիզբի մասը վերեւ մէջբերեցինք:

«Եւ վասնզի բազում անուղղայ եւ անպատշաճ անկարգութեամբ ելից զտունըս Հայոց, զոր աստանօր կամիմ ի գլուխս բաժանելով բացայայտել սակաւօք, ընդ որս տհաճ եւ անկամակ եղեալ

(9) Պատմագրութիւն, էջմիածին, 1870, էջ

(8) Օրագրութիւն, Երեւան, 1938, էջ 64: 71: